

ՀԱՐՈՒՔ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Վարդուց հայտնի է, որ թե՛ հայ, թե՛ համաշխարհային գրականագիտության մեջ նամականին երկրորդական, ծածանցյալ գրականություն է դիտվում: Այն նպաստում է տվյալ հեղինակի գրական ժառանգության ամբողջական, համակողմանի ուսումնասիրությանը: Ահա այդպես է նաև Հ. Կոստանդյանի պարագայում:

Հարուք Կոստանդյանի նամակները կազմում են գրողի ստեղծագործական ժառանգության կարևորագույն մասը: Գրողի նամականին անչափ արժեքավոր է. այն կարծես ծառայում է որպես մի բանալի՝ հեղինակի զեղարվեստական համակարգի, զեղագիտության և կենսափիլիսոփայության առավել հանգամանալի քննության, ամբողջականացման համար:

Յուրաքանչյուր նամակ արտացոլում է բանաստեղծի հոգեկան աշխարհը, նրա ապրումները՝ հիասթափություններն ու ոգևորությունը, թախծն ու հրճվանքը, գաղափար է տալիս նրա մտավոր կարողությունների, հետաքրքրությունների շրջանակի, ծրագրերի, աշխարհայացքի, ստեղծագործական որոնումների մասին:

Հայտնի է, որ Կոստանդյանը երկար ժամանակ ապրել է մեկուսացած, հասարակությունից հեռու: Նման կենսակերպ ունեցող մարդու համար արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու միակ միջոց է դառնում, քնականաբար, նամակագրությունը: Դրա մասին վկայում են հենց բանաստեղծի նամակները, որտեղ և կարդում ենք. «Արտաքին աշխարհի հետ միակ շփման կետերն եք՝ Բյուզանդն ու դուն (Բ. Պոտոսյանը – Ս. Մ.)»¹:

Հ. Կոստանդյանը երկար ժամանակ նամակագրական կապ է պահպանել իր ամենամտերիմ ընկերոջ՝ Բաբկեն Պոտոսյանի և բանաստեղծ, «Անդաստան»-ի խմբագիր, նկարիչ Բյուզանդ Թոփալյանի հետ, որոնց նա ծանոթացել է Փարիզում: Պոտոսյանը հետագայում տեղափոխվել է Սեքսիկա, սակայն դա չի խանգարել նրանց նամակագրական կապի շարունակմանը: Առավել լայն է Կոստանդյանի՝ Պոտոսյանին ուղղված նամակների ժամանակային ընդգրկումը՝

¹ Յարուք Կոստանդյան, Նամակներ, Փարիզ, 1990, էջ 40:

1935-1974: Այդ նամակները շարունակական բնույթ են կրում թեմատիկ, բովանդակային տեսանկյունից, անչափ միաս-նական են իրենց նյութի ընդգրկման առումով:

Ցավոք այսօր չեն պահպանվել (գուցե պահպանվել են, սակայն մեզ դեռևս չեն հասել) վերջիններիս պատասխան նամակներն ուղղված Յ. Կոստանդյանին, որոնք, բնականաբար, թույլ կտային առավել ամբողջական պատկերացում կազմել Յ. Կոստանդյան մարդու, բանաստեղծի և արվեստագետի մասին, ինչպես նաև ժամանակաշրջանի ֆրանսահայ գրական միջավայրի մասին:

Նկատելի է, որ Բ. Թոփայանին հասցեագրված նամակներում Կոստանդյանն ավելի շատ անդրադառնում է զուտ գրական-գեղարվեստական, գրաքննադատական հարցերի քննարկման վրա, այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ Թոփայանի հետ Կոստանդյանն առավելապես «գործնական» հարաբերությունների մեջ էր գտնվում:

Այլ է Բ. Պոտոսյանի պարագայում: Առաջին հերթին պետք է նշել, որ նրանք՝ Կոստանդյանը և Պոտոսյանը, շատ մտերիմ ընկերներ էին դեռ երիտասարդ տարիներից, և նրանց նամակներն էլ այդ իսկ պատճառով ավելի զգացմունքային են և առավել անձնական խնդիրներ են շոշափում՝ իհարկե գրականության և արվեստի խնդիրներին զուգահեռ:

Նամակները երկու ընկերներին (Կոստանդյան և Պոտոսյան) մտերմանալու, անկեղծանալու, իրենց երազանքների մասին պատմելու բացառիկ հնարավորություն են ընձեռնում: Դրա մասին հայտնում է նաև Կոստանդյանը. «Ինչքան լաւ կը լինէր, եթէ մենք մեր նամակներով՝ փորձէինք հաղորդել մեր իսկական երազները, մեր գաղափարներն ու մեր յոյզերը պարզել մեկը միւսին, անկեղծութիւնը՝ ինքնին համոզիչ լինելով՝ պիտի ստեղծէ ներդաշնակ խօսակցութիւն»²: Բայց միաժամանակ կարող ենք նկատել, որ Պոտոսյանը հաճախ է իր ավագ ընկերոջը գնահատելիս ծայրահեղության մեջ ընկնում: Դա նկատում է առաջին հերթին հենց ինքը՝ Կոստանդյանը: Վերջինս համոզված է, որ այդ հարցում ծայրահեղությունը կարող է ընկերների մեջ կեղծիքի արմատներ սերմանել, հետևաբար կոչ է անում սթափ մայել կյանքին, իրականությանը:

Իր նամակներում Յ. Կոստանդյանը անդրադարձել է ժամանակի թե գրական կյանքի, թե ընդհանրապես տվյալ ժամանակաշրջանի կարևորագույն

² Նույն տեղում, էջ 34:

խնդիրներին, քննության է առել ամենատարբեր խնդիրներ, փորձել է տալ զնահատականներ:

ժամանակի հրատապ ու ցավոտ խնդիրներից մեկը, իհարկե, սփյուռքի հետագա զոյության շարունակության հարցն էր: Պետք է նշենք, որ թեև Կոստանդյանն անդրադառնում է սփյուռքում տիրող իրադրությանը, հասարակական խնդիրներին, այնուամենայնիվ, նրա ստեղծագործությունների համար սփյուռքը չի դառնում պատկերման կենտրոնական առարկա՝ ի տարբերություն այլ հեղինակների:

Կոստանդյանին սաստիկ վրդովեցնում էր սփյուռքահայության անկազմակերպվածությունը: Նա շարունակ իր դժգոհությունն է արտահայտել սփյուռքում, տվյալ պարագայում՝ Փարիզում տիրող իրավիճակից, ֆրանսահայերի մեջ ընդունված, կեղծ, սառը մարդկային հարաբերություններից: Կոստանդյանը ցավով էր նկատում, որ գրական շարժման ձևավորման խնդրում չկա, բացակայում է հասարակության լայն խավերի շահագրգռվածությունը. «...բոլորս, աւել կամ պակաս չափով զոհերն ենք: Ափիւռքի մէջ տիրող անկազմակերպ եւ ջլատիչ իրականութեան. ապրում ենք օրը օրին, յուսալով թէ վաղը մի ոեւէ «հրաշքով» մեր կեանքի պայմանները կը փոխուեն, թէ ինքընդստիմքեան կը ստեղծուի այն ջերմ ու ընկերական միջավայրը ուր մեզանից իւրաքանչիւրը իր դերն ու կարեւորութիւնը կը ստանայ... Բոլորս էլ յանցաւոր ենք, որովհետեւ բոլորս էլ եսամոլ եւ յամառ հայեր ենք. անկարգապահ եւ մանաւանդ անկիրթ, ասում եմ բոլորս...»³:

Գրողի համար կարևորագույն նպատակ էր դարձել սփյուռքահայության, իսկ առաջին հերթին՝ սփյուռքահայ մտավորականության միավորումը: Դրան, ըստ Կոստանդյանի, թերևս պետք է նպաստեր գրական որևէ պարբերականի ստեղծումը: Նամակներից երևում է, որ Կոստանդյանն ինքն անչափ ոգևորված էր գրական ամսագիր կամ թերթ ունենալու գաղափարով, և հավատացած էր, որ այդպիսի ամսագիրը կամ թերթը կկարողանան նպաստել սփյուռքում գրականության, արվեստի զարգացմանը և միաժամանակ կհամախմբեն սփյուռքահայ մտավորա-կաններին. «....գոնէ եթէ մի եռամսեայ թերթ ունենայինք—ստիպուած կը լինէինք աշխատել—ամսէ ամիս գործ արտադրել—թարգմանութիւն, քննադատական յօդուածներ, բանաստեղծութիւն ու պատմուածքներ գրել, մտածելով որ թերթի էջերը սպասում են, եւ պէտք չէ

³ Նույն տեղում, էջ 30:

ուշանալ»⁴: Իսկ երբ սկսվում է «Անդաստան»-ի տպագրությունը, նա վստահ էր, «որ «Անդաստանը» մի իսկական վերածնունդի շարժում եւ խանդավառութիւն պիտի ստեղծէ»⁵:

Սակայն շուտով վրա է հասնում խոր հիասթափությունը, որովհետև Թովալյանը, ինչպես նկատում է Կոստանդյանը, իր ամսագիրը «վարեց «միապետական» յամառութեամբ»⁶: Նկատենք, որ եթե «Անդաստան»-ը իր հրատարակման սկզբնական շրջանում՝ 1952-ից սկսած, հեղեղված էր գրական-գեղարվեստական ստեղծագործություններով, գրաքննադատական հողված-ներով, վերլուծականներով, այսինքն՝ ծառայում էր սոսկ գրականությանն ու արվեստին, դրանց զարգացմանը, ապա հետագայում ամսագրի էջերում հայտնվում են բազմապիսի նյութեր, հողվածներ, որոնք առնչվում էին պատմագիտությանը, բժշկագիտությանը, փիլիսոփայությանը, բայց ոչ գրականությանը: Սակայն, ցավոք, նրա հույսերն ի դերև են ելնում:

Իրականությունը Կոստանդյանին բոլորովին էլ չէր ոգևորում, այլ միայն հիասթափության գիրկն էր նետում: Եվ վերջինիս համար մխիթարություն է դառնում ստեղծագործելը («գրական-գեղարուեստական փորձերով զբաղուելն է որ համ է տալիս կեանքին»⁷): Եվ չնայած ոգեշնչող, խանդավառող ոչինչ չկա, սակայն նա շարունակում է ստեղծագործել. «Չակառակ ամեն դժբախտութեան մենք տակաւին փողեր ենք հնչեցնում ու թմբուկներ ենք զարնում»⁸: Այս իրողությունը նա բացա-տրում է առաջին հերթին հայի՝ դարերից եկող դիմակայող ոգու առկայությամբ, նրա տոկունությամբ:

Դայության գոյության շարունակության հարցում Կոստանդյանը իհարկե կարևորում է հայ լեզվի պահպանումը. «Չայերենը մեր միակ զրահն է, տեգն ու վահանը, աղեղն ու նետը միանգամայն: Միակ սրբավայրը որ խանութպանն ու վաշխառուն, հայ ժողովուրդի անունը վարկաբեկող հայանուն խոզերի վոհմակը դեռ չէ պղծել»⁹: Երկար ժամանակ ապրելով Ֆրանսիացիների մեջ՝ Կոստանդյանը կարոտ էր հայերեն խոսելուն, հետևաբար հայերենը չմոռանալու, հայերեն «խոսելու» միակ միջոց դառնում է նամակ գրելը: «Գրիր

⁴ Նույն տեղում, էջ 68:

⁵ Նույն տեղում, էջ 70:

⁶ Նույն տեղում, էջ 52:

⁷ Նույն տեղում, էջ 57:

⁸ Նույն տեղում, էջ 67:

⁹ Նույն տեղում, էջ 31:

հայերեն. այս չոր շրջանին, հայերեն կարդալու միակ առիթն են քո նամակները», - գրում է բանաստեղծը Բ. Պոտոսյանին: Կոստանդյանի համար, անշուշտ, ստեղծագործելու անհրաժեշտ նախապայման է մշակված լեզուն: Բանաստեղծը համոզված է, «...որ լեզուն անհրաժեշտ գործիք է գրագետի»¹⁰: Իսկ մեկ այլ նամակում Կոստանդյանը գրում է. «Բանաստեղծութիւնը լեզուի հանճարն է որ արտայայտում է բառերով այն՝ որ բառերն երբեք չեն նշանակել, այսինքն *այն, որ գիտենք եւ չգիտենք, որ գիտենք*»¹¹: Թվում է՝ բանաստեղծը բառախաղով է զբաղված, սակայն հստակ է նրա ցանկությունը, ասելիքը. «Իսկական բանաստեղծութիւնը կարելի է արծակի վերածել. այսինքն *թարգմանել* արծակի - միայն թէ այդ աւելորդ աշխատանքը իմաստ չունի, եթէ բնագրի լեզուով պիտի կատարենք - որովհետեւ բանաստեղծի բնածին եւ միակ տաղանդն է արդէն՝ որ մտքերի, յոյզերի եւ փորձառութեան *արծակ էջերը* վերածել բանաստեղծութեան - մի ձեւի (նկարագրական) եւ մի խորքի (իմացական) ներդաշնակ համադրութեան մէջ: Իսկ ճիզմեճեանի ոտանաւորները ամբողջովին արծակ են. միայն թէ չափազանց մեղանշում է համաձայնական օրէնքների դէմ, որով իր նախադասութիւնները, չափազանց խրթին են եւ անշուշտ, անշուշտ, անշուշտ՝ վերացական խորիմաստ խորհուրդներով անհաղորդ՝ սովորական մահկանացուներին: Վասալլամ!»¹²: Կոստանդյանը քննադատում է այն բանաստեղծներին, ովքեր ծանոթ չեն լեզվի կառուցվածքին, տվյալ լեզվի բառապաշարին և փորձում են խրթին բառերի, արտահայտությունների գործածությամբ կարևորություն տալ իրենց գործերին: Սակայն դա չի կարող դառնալ տվյալ ստեղծագործության համար հաջողության նախադրյալ, քանզի այդ հեղինակներն անտեսում են ընթերցողի դերը:

Կոստանդյանն իրեն իրավունք է վերապահում քննադատելու իր գրչակից ընկերներին առանց կողմնապահության, քանզի հենց ինքն էլ առողջ քննադատության կողմնակից էր, քանզի այն «քաջալերութեան ու աշխատանքի մղող խօսքերի չափ անհրաժեշտ է»¹³:

Պետք է նշենք, որ իր գրչեղբայրներին քննադատելիս Կոստանդյանը բոլորովին էլ չի ընդունում «վեթերանական կեցուածք», իսկ նրա քննադատությունը քարոզչական միտումներից զերծ է, այլ նրանց վերաբերվում է

¹⁰ Նույն տեղում, էջ 80:

¹¹ Նույն տեղում, էջ 84:

¹² Նույն տեղում, էջ 84:

¹³ Նույն տեղում, էջ 40:

ինչպես հավասարների, քանզի ինքն էլ իր ստեղծագործություններում խուսափում է թելադրող լինելուց. «Արդ արուեստը *երբեք* քարոզչական չէ, այլ անուղակի կերպով, իր ձևի գեղեցկութեամբ, իր «մակերեսային» պարզութեամբ՝ իր հաղորդականութեամբ՝ նուաճում է ամեն ընդդիմախօսութիւն. մի խօսքով, համոզում է: Իսկ «*վեթերանական*» կեցուածքին զալով, ուզում են ասել որ ընթերցողը այն տպաւորութեան տակ է թէ իր հետ խօսող հեղինակը՝ վաղուց արդէն հասել է հոգեկան, լինելութեան ներդաշնակութեան, եւ թէ անդորր ու անվրոգվ բարձրութիւններից՝ խօսում է նրա (ընթերցողի) հետ»¹⁴: Ստեղծագործական գործընթացի զարգացման հարցում բանաստեղծն անչափ կարևորում է գրող-ընթերցող փոխհարաբերությունների դերն ու նշանակությունը, թեև նամակներից մեկում Կոստանդյանը միաժամանակ գրում է. «Ես համոզուած եմ որ երբեք պէտք չէ մտածել ընթերցողի մասին. նրա գոյութիւնը չպէտք է մեզ զբաղեցնէ, այլ ընդհակառակը՝ ընթերցողն է որ պէտք է հետաքրքրուի, զբաղուի մեր գոյութեամբ»¹⁵: Սա չի նշանակում, թե Կոստանդյանն արհամարհական վերաբերմունք է տածում դեպի ընթերցողը: Ուղղակի նա այն դիրքորոշումն ունէր, թե ընթերցողն էլ իր հերթին չպէտք է թելադրի գրողին, նրա քմահաճույքները չպէտք է գերիշխող լինեն վերջինիս համար: Բանաստեղծը միաժամանակ հավատացած է, որ ընթերցողն է այն ուժը, որ ոգևորելու և դրամով նպաստելու է գրականության, արվեստի զարգացմանը:

Այսպիսով՝ Կոստանդյանի նամակները մեզ հնարավորություն են տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել Կոստանդյան մարդու և արվեստագետի մասին, որն իր էութամբ արտացոլվում է իր ստեղծագործություններում, ծանոթ լինել նրա մտահոգություններին, գեղարվեստական համակարգին: Կոստանդյանի նամակների հիմնական մասը բանաստեղծի համար ծառայում են որպես յուրօրինակ կանոններ՝ նրա կյանքի և ստեղծագործական գործընթացի հետագա զարգացման համար:

¹⁴ Նույն տեղում, էջ 55:

¹⁵ Նույն տեղում, էջ 53: